N ԱԱ-23
13 օգոստոսի 2019թ.

Երևանի Քաղաքապետ
Հ. Մարությանին

Տեղեկություն ստանալու Հարցում

Հարգելի՛ Քաղաքապետ,

Եվրոպական Միության կողմից համաֆինանսավորվող և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում, ս/թ. օգոստոսի 1-ից «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Կանաչ արդարություն» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակում, մենք նախատեսում ենք զբաղվել Երևանի Դալմայի այգիների հողօգտագործողների, և նաև՝ բուն Դալմայի այգիների շահերի պաշտպանությամբ:

Այդ պատճառով, համաձայն ՀՀ-ի կողմից վավերացրած «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիությոն մասին» (Օրհուսի) կոնվենցիայի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի, խնդրում եմ մեզ տրամադրել ներքոնշյալ տեղեկատվությունը.

- որքա՞ն է եղել Դալմայի այգիների ընդհանուր տարածքը, նախքան ՀՀ կառավարության 27.03.2003թ. «Երևանի Դալմայի այգիների պահպանման և նպատակային փոփոխության ենթակա սահմանների մասին» 1941-Ա որոշմամբ նախատեսված փոփոխությունների իրականացումը,
- ի՞նչ կարգավիճակով է այն եղել,
- ովքե՞ր են այն տիրապետել և ի՞նչ հիմունքերով:

Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է Հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում և այդ գրավոր հարցման գործավարությունն էլ իրականացվում է քաղաքացիների դիմումների և բողոքների համար օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գործավարության մյուս ձևերից առանձին:

Ուստի խնդրում ենք սույն Հարցմանը պատասխանել Օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

Հարգանքով՝
«Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ նախագահ՝

Մարի Չաքրյան _____

Հասցե՝ Գ. Մահարի 64, Երևան 0020, հեռ. 093 991212
«Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ